

## ԵՐՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

### **ՀԱՏՎԱԾ «ԱՐԱՐԱՏԻ ՀԱՆԴԵՊ» ԾԱՐՔԻ «ՔԱՐԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԻՑ**

Ես, որ քար էի,  
Արյունոտվեցի,  
Խաղացի մի դեր, որ ողջ աշխարհում  
Դեռ չկը վիճակիել խաղալ ոչ մեկին:  
Եվ հեղինակն այդ սև ողբերգության  
Հանձարեղ էր, քան Չինգիզանն ինքը...  
Եվ հեղինակն այդ սև ողբերգության,  
Որի անոնն է «ցեղասպանություն»,  
Սուպեր դահիճն էր,  
Եվ նույն ժամանակ  
Սուպերծորտն էր նա իր նյութած մահվան...  
Եվ թող դարեղար անիծված լինի...

Եվ ես մնացի այդպես արյունոտ,  
Եվ ես մնացի այդպես բվկոված,  
Եվ ես մնացի այդպես ցիրուցան,  
Սակայն մնացի,  
Սակայն մնացի...

Զայնով մայրերի ու մանուկների,  
Սերմնացանների, քանաստեղծների,  
Ես անիծեցի ցեղասպաններին,  
Ես ատամներս սեղմեցի ամուր,

Ամուր, շատ ամուր ու դարձա ամուր,  
Առավել ամուր, քան էի առաջ:  
Եվ իմ քնարի քաղցր մեղեղին  
Վերածվեց քարն ահեղ մեղեղու,  
Ու երգում եմ ես.

Քար է ողիս  
Ու կամքս՝ քար,  
Դիտի ապրեմ  
Ես դարեղար...

Ողջ աշխարհում քիչ կան պատեր,  
Որ նմանվեն ոգոս պատին,  
Ես հույսով եմ նայում անվերջ  
Իմ սրբազն Արարատին:

Թեև քախտն իմ շատ էր դաժան,  
Քայլ մնացել եմ ես անեղծ.  
Քանզի քար եմ ես անսասան,  
Քանզի քար եմ և քանաստեղծ...

